

ԱՆԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏՐ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

1959 թ. սեպտեմբերի 25-ին լրացավ գիտության վաստակավոր գործիչ, ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի մահվան 15-ամյակը: Անցնող տարիները չեն աղուտում և չեն կարող աղուտել մեծ գիտնականի հիշատակը, որովհետև այդ հիշատակը կապված է նրա թողած ծանրակշիռ դիտական ժառանգության հետ, մի ժառանգություն, որն այնքան շատ բան ունի իր մեջ ուսանելի և օգտակար:

1

Մանուկ Աբեղյանի անունը ամենից առաջ անխզելիորեն կապված է հայ ժողովրդի ազգային մեծ էպոսի հետ: Բր աշխատանքն այդ ուղղությամբ սկսելով «Սասունցի Դավիթ» պատումներից մեկի գրառումով (1886), այնուհետև նա մինչև իր կյանքի վերջին տարիները բազմիցս անդրադարձել է նույն թեմային:

1889—1890 թթ. «Մուրճ» ամսագրում տպագրվում է Աբեղյանի «Սասունցի Դավիթ» նվիրված առաջին ուսումնասիրությունը «Ազգային վեպ» վերնագրով, հիմնված վեպի՝ հրապարակում եղած երկու պատումների նյութի վրա: Տարիներ հետո (1906—1908) «Ազգագրական հանդես» մի քանի գրքերում լույս է տեսնում վեպին նվիրված նրա երկրորդ, ավելի ընդարձակ ու բազմակողմանի հետազոտությունը՝ «Հայ ժողովրդական վեպը» վերնագրով, կատարված «Սասունցի Դավիթ» արդեն հրապարակի վրա եղած 15 պատումների նյութի հիման վրա: Ավելի ուշ (1936—1944 և 1951) Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ և կարապետ Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ լույս են տեսնում վեպի շուրջ 50 պատումների գիտական ամբողջական ժողովածուի երկու հոյակապ հատորները «Սասնա ծռեր» վերնագրով: 1939 թ. Աբեղյանը գործոն մասնակցություն է ունենում հայ ժողովրդի հերոսական մեծ էպոսի 1000-ամյակի տոնակատարությանը, լինելով այդ գաղափարի հղացողներից մեկը: Այդ թվականին նա կազմում և հրատարակության է պատրաստում վեպի հոբելյանական համահավաք բնագրի առաջին ճյուղը (սեփական և Բաղդասար): Նույն 1939 թ. տպագրվում է Աբեղյանի ընդարձակ ակնարկը 1874—1939 թթ. ընթացքում վեպի մասին լույս տեսած գրականության վերաբերյալ, ուր նա տալիս է այդ գրականության քննական սպառիչ բնութագիրն ու գնահատականը:

Սոսկական այս թվարկումն իսկ պերճախոս կնքով ցույց է տալիս այն մեծ աշխատանքը, որ կատարել է Աբեղյանը «Սասունցի Դավիթ» պատումների հայտնաբերման, խմբագրման, մասսայականացման և հետազոտության բնագավառում: Առանձնապես արժեքավոր է եղել նրա գործը վեպի ուսումնասիրության ուղղությամբ: Աբեղյանը եղել է և մնում է մեր վեպի ամենահմուտ հետազոտողը: Ընդհատ է, նրա հետ միասին, նրանից առաջ ու հետո «Սասունցի Դավիթ» մասին գրել են և ուրիշները, սակայն ոչ մեկը նրա նման մանրամասն, բազմակողմանի ու խորը չի ուսումնասիրել վեպը:

Աբեղյանը առաջիններից մեկն է եղել մեր իրականության մեջ, որը լավ ըմբռնելով, թե ինչ մեծ գանձ է ինչպիսի ազնիվ նյութ է ներկայացնում իրենից «Սասունցի Դավիթ», գրել է նրա գրական մշակման անհրաժեշտության կարևոր խնդիրը: Հովհաննես Թումանյանի հանրահայտ «Սասունցի Դավիթը» գրված է Մանուկ Աբեղյանի խորհրդով և նրա աված օգտակար ցուցումներով:

Մանուկ Աբեղյանը հայ ժողովրդական առասպելների լավագույն գիտակն էր: Իր «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» խորագիրը կրող փայ-

¹ Տե՛ս «Սասունցի Դավիթ», Բիբլիոգրաֆիա, պրակ Ա, Երևան, 1939:

յուն աշխատության մեջ (1899) գիտական սուր բանավեճով նա քննադատության է ենթարկել մեկանում հայտնված այն կարծիքը, ըստ որի խորենացու «վեպ» կոչված աղբյուրները իբր թե շինծու են, որ «վեպ» անվան տակ պատմաճոր մոտ իբր թե «ծածկված են մի ամբողջ շարք թարգմանական և ինքնադիր գրավոր հիշատակարաններ»¹։ Համոզիչ ու աներկբա փաստերով ու փաստարկներով Արեղյանը ասացուցել է, որ խորենացու «Պատմության» մեջ հիշված բանահյուսական նյութերը իրոք եղել են հայոց մեջ, և որ «խորենացին կամ ինքն անձամբ, կամ յուր աղբյուրների միջոցով օգտվել է հայ ժողովրդական առասպելներից»²։

Մեծ է Արեղյանի տվյալ հետազոտության նշանակությունը հայագիտության համար։ Հաստատելով խորենացու «Պատմության» բանավոր աղբյուրների վտվերակետությունը, նա պրանով իսկ վերականգնել է այլ «Պատմության» հեղինակությունը։ Տարբերագատելով պատմաճոր մոտ եղած պատմական և բանահյուսական նյութերը, նա գյուրացի է վերջիններիս օգտագործման խնդիրը, ճշտել կամ պարզել է հայոց առասպելների ժողովրդական բնույթը, նրանց դիցարանական էությունն ու պատմական զգեստավորումը։

Արեղյանը ստեղծել ու կատարելագործել է բանահյուսական բնագիծների խմբագրման ու հրատարակման գիտական հասակ մեթոդ, դրա համար հմտորեն օգտագործելով պատմագրական հին հուշարձանների հրատարակության ասպարեզում հայ բանասիրության մեծ փորձը և հանդես բերելով աղբյուրագետ-բանասերի իր փալուն տաղանդն ու հմտությունը։ Նրա աշխատանքի հիմքում ընկած է եղել գիտականի բարձր կարծիքը ժողովրդական բանահյուսության հանազողական և զեղարվեստական խոշոր արժեքի մասին։ Դրանով էլ պայմանավորված է Արեղյանի ուշադիր վերաբերմունքն ու մանրակրկիտ մոտեցումը ժողովրդական վեպի, երգի և մյուս սակզծագործությունների նրբերանգների պահպանման, նրանց տարբերակների որոշման, առանձին տողերի, բառերի, արտասանության եղանակի վերականգնման ուղղությամբ և այլն։

Բանագիտական-բանասիրական աշխատի սկզբունքներով է պատրաստված մեծածախ «այգետի «Ժողովրդական խաղիկներ» վերնագրով ստվար հատորը (1940), որը պարունակում է տասնյակ տարիների ընթացքում հեղինակի (մասամբ նաև կոմիտասի) գրի առած և լուսավորված բանահյուսական-ազգագրական տպագիր ու ձեռագիր ժողովածուներից, ինչպես նաև մի շարք պարբերականներից հավաքած շուրջ 3,500 ժողովրդական խաղիկներ (գլուպական փորը երգեր) իրենց տարբերակներով։ Քննության առարկա հատորը իր հարուստ նյութով և բնագրական ու բովանդակային ներածական ուսումնասիրությամբ ամբողջական ու լավ պատկերացում է տալիս հայ ժողովրդական բանաստեղծության ամենաարածված տեսակներից մեկի մասին, որ ճշմարտացի կերպով արտացոլված են հայ շինականի աշխատանքային-արտագրական առօրյան, նրա կենցաղն ու հոգևորանությունը, ապրումներն ու մտորումները։

Նմանօրինակ մի գործ է նաև Արեղյանի «Գուսանական-ժողովրդական տաղեր» վերնագրով խոշորված (1940)։ Այստեղ կարելի է գտնել հայ ժողովրդական գուսանների կողմից գրված ընթացքում ստեղծված ու մշակված շուրջ 500 անուն բարձրարվեստ տաղեր, իրենց բազմաթիվ հին ու նոր տարբերակներով, որոնք հանդիսանում են հայ ժողովրդի բանաստեղծական հանձնարի ամենախոսուն վիպականը և պերճախոս կերպով հերքում են որոշ գրականագետների հերքությանը մեր ժողովրդական բանաստեղծության պարզունակ ու անարվեստ լինելու մասին։ Արեղյանի այս աշխատությունը, ինչպես և սրան նախորդող «Հին գուսանական-ժողովրդական երգեր» (1931) մեծարժեք ուսումնասիրությունը արվյունը են հեղինակի կողմից ձեռագրական ու այլ աղբյուրներում կատարված երկար տարիների պրպտումների և բանասիրական-հետազոտական տրնաջան մեծ աշխատանքի։

Նշանակալից է Արեղյանի կատարած գործը պատմա-գրական հնագույն հուշարձանների մեջ ներթափանցած բանահյուսական ստեղծագործությունների վերականգնման ուղղությամբ։ Հենվելով հայ մատենագիրների մոտ պահպանված առանձին վիպական մոտիվների ու գրույցների բեկորների վրա, նա հավաստել ու հաստատել է պարսից նվաճողների զեմ հայերի մղած ազատագրական կռիվների շուրջը ստեղծված հին, կորած վեպերից մեկի՝ «Պարսից պատահարի» գոյությունը։ Չբավականանալով վերջինիս մնացորդների հայտնաբերումով և նրա ունեցած ամբողջական պատկերի վերականգնումով, հմուտ բանասերը հաջողությամբ ցույց է

¹ Դ. Մ. Արեղյան, «Армянский эпос в „Истории Армении“ Монсея Хоренского. Москва, 1896, էջ 340։

² Մ. Արեղյան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. խորենացու հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 594։

տվել նաև այդ վեպի դարերի ընթացքում կրած փոփոխությունները: Արեղյանի կարծիքով «Պարսից պատերազմ» վեպի Մուշեղի ճյուղը հատկապես ապրել է Տարոնում և ստացել է տեղական բնավորություն, կազմել է մի նոր վեպ, որ նա կոչում է «Տարոնո պատերազմ»: Գիտնականը ցույց է տալիս, որ այս վեպը արաբների տիրապետության շրջանում փոփոխություն է կրել: պարսից գեմ կոխվր դարձել է կոխվ արաբների դեմ: Վեպն աչնուհետև IX դարի երկրորդ կեսին, Սասունում և Տարսնում տեղի ունեցած դեպքերի ազդեցության տակ, բոլորովին ներպարանափոխ է եղել և ապա հաջորդ դարերի ազդեցությունը ևս կրելով (գլխավորապես մինչև XVIII դարը), կազմվել է մեր նոր վեպը: Տարոնի պատերազմը պարսից գեմ՝ դարձել է Սասնա կոխվ Մարա Մեկիրի գեմ: Հին աղանդները կամ մոռացության են տրված շատ հին միջադեպերի հետ, կամ թե՛ ինչպես Մուշեղ Պապ և Շապուհ արքան՝ ետ են մղված նորերի առաջ: Այդ կերպարանափոխությունը կատարվել է մեկ այն պատճառով, որ Սասունն անբուժան է եղել Տարոնից, մեկ էլ՝ որ Սասնա IX—XIII դարերի գեպերը նման են եղել հին վեպի մեջ պատմվածներին¹:

Կարելի է երբեմն տարակուսել Արեղյանի առանձին գիտությունների ու դատողությունների նկատմամբ, չհամաձայնվել նրա որոշ թեզերի հետ (օրինակ՝ «Պարսից պատերազմ» վեպի բարոյապետ ուսանալու լինելու մասին), մի բան անկասկած է, որ նա կատարել է շնորհակալ գործ՝ վերականգնելով ավանդական հայ բանահյուսական հնագույն հուշարձանները:

2

Մեծ է Մանուկ Արեղյանի գերը հայոց հին ու նոր լեզուների ուսումնասիրության բնագավառում: Տարիների ընթացքում նա այս ուղղությամբ գրել ու հրատարակել է մի շարք աշխատություններ, որոնց մի զգալի մասը երկար ժամանակ անխորհրդի է ձևանալիս երևել էր, և այդպիսով, ուսուցչության և դասախոսների համար:

Արեղյանի լեզվաբանական-քերականագիտական աշխատություններից հատկապես մեծարժեք են նրա «Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912) և «Հայոց լեզվի տեսությունը» (1931), որոնց մեջ խոսքոված ու ընդհանրացված են գիտականի տվյալ ուղղությամբ կատարած երկարամյա հետազոտությունների լավագույն արդյունքները և ուր երևան են եկել լեզվի երևույթներն իրենց պատմական զարգացմամբ, ընթացքի մեջ գիտելու նրա մեծ կարողությունները:

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Արեղյանը տվել է հայերենի շարահյուսության առաջին բնագրական, մանրակրկիտ ու բազմակողմանի, գիտականորեն ճշտված ու հիմնավորված ուսումնասիրությունը: Նա խորը կերպով հետազոտել է հայոց լեզվի շարահյուսությունը, ամենայն մանրամասնությամբ ներկայացրել շարք ու բարդ նախադասություններ, նրանց կառուցվածքը, բարդ նախադասությունների մեջ մանր ու պարզ նախադասությունների կապն ու փոխհարաբերությունները, ուսումնասիրել է խոսքի մասերի շարահյուսական ֆունկցիաներն իրենց կոնկրետ արտահայտության, պարզել հայերենի հոլովների կիրառական նշանակությունները, կապերն ու կապական բառերը, շարկապները, ցույց տալով դրանց իմաստային նրբերանգները և այլն:

«Հայոց լեզվի տեսության» մեջ Արեղյանը հետազոտել է հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը, բառակազմությունն ու ձևաբանությունը: Նա պարզաբանել և գիտականորեն հիմնավորել է աշխարհաբարի բայական կառուցվածքի սխեման, խոսքի մասերի ուսմունքը, բառաբարդություններն ու նրանց տեսակները, վեր հանել հայերենի բոլոր ածանցները, բացահայտելով դրանց իմաստային նրբությունները, ճազումն ու զարգացումը:

Արեղյանը աշխատանք է նաև Արեղյանի կազմած «Բուս-հայերեն սլոգանային բառարանը» (1925), որը հանդիսանում է սովետահայ բառարանագրության առաջինը և միաժամանակ ռուսերենից ուրիշ լեզուների թարգմանված առաջին ռազմական մեծ բառարանը: Իր բառարանի համար հեղինակը մեծ հմտությամբ նոր կազմել է կամ հին հայերենից վերաիմաստավորմամբ վերցրել է 1000-ից ավելի բառեր, որոնք մինչև այդ կամ չեն եղել նոր հայերենի մեջ

¹ Մ. Ա. Բ. Գ. Կ. Կ., հայ ժող. վեպը, Թիֆլիս, 1908, էջ 109—111, 117—124, 126—149:

կամ էլ չեն գործածվել այն նշանակությամբ, որ ունեն համապատասխան բառերը ուսուրի-նում: Շնորհիվ Արեղյանի ռազմական բառարանի այժմ այդ բառերը ընդհանրացած և սովորա-կան են դարձել հայոց լեզվի մեջ:

Եթե ու անուրանալի է Արեղյանի լեզվաբանական-բերականագիտական ժառանգության նշանակությունը: «Արեղյանը այնքան մեծ օգուտ է տվել հայերեն լեզվին, որքան իր նախորդ-ներից ոչ մեկը: Հայ բերականագիտությունը Մ. Արեղյանը բարձրացրել է մի նոր աստիճանի վրա», — գրում է պրոֆ. Պոկտ. Ա. Ղարիբյանը և շարունակում. «Մինչև Արեղյանը մեր ոչ մի լեզ-վաբան այդպիսի խորությամբ չէր քննել բերականական հասկացությունները, չէր դուրս բերել բերականությունը նորմատիվ վիճակից ու հասցրել այն փիլիսոփայական այսպիսի բարձ-րության: ...Առանձնապես մեծ է Արեղյանի վաստակը աշխարհաբար հայերենի բայական կա-ռուցվածքը ճշտորեն բմբունելու և բերականության մեջ արտացոլելու գործում: ...Արդի բերա-կանագիտությունը ի թիվս շատ ու շատ հարստությունների ժառանգել է Արեղյանի այդ արժա-նավոր վաստակը, ստուգել է կյանքում, փորձել է դպրոցներում և դարձրել իր անսասան հե-նարաններից մեկը»¹:

Լեզվի հետ սերտորեն կապված, բայց իր բնույթով գրականագիտական գործ է Արեղ-յանի հոյակապ աշխատություններից մեկը, նրա «Հայոց լեզվի տաղաչափությունը» (1933): Վերջինիս մեջ մանրամասն ու բազմակողմանի նետազոտված է հայոց լեզվի բառային ու խոս-քի շեշտը, հայկական ոտանավորի տակտերն ու հանգերի տեսակները, տրված է բազմադար-յան հայ բանաստեղծության չափերի գիտական բնութագիրը, Արեղյանը հատուկ կերպով և մասնագիտական հմտությամբ ուսումնասիրել է հայերեն ոտանավորի դարերի ընթացքում կրած փոփոխությունները և որոշել նրա զարգացման օրինաչափությունները՝ սկսած V II դարից մինչև սովետական շրջանը ներառյալ: Բոլոր եզրակացությունները իր ուսումնասիրության Արեղյանը նշում է, որ թեև հայերեն ոտանավորի հիմնական չափերն են յամբը, անապեստոր և յամբ-անապեստյան խառը ոտանավորը, չափեր, որոնց շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, որովհետև հայերենում բառային շեշտը գրվում է սովորաբար վերջին վանկի վրա, բայց հայկական բանաստեղծության մեջ սովորական երևույթ է, երբ տողի մեջ հանդես են գալիս բո-րեյներից ու դակտիլներից կազմված ոտեր, որոնք ոտանավորի ռիթմը դարձնում են ին-տոնացիայով հարուստ, հեշել ու պլաստիկ: Այս կարևոր երևույթը հեղինակը իրավացիորեն բացատրում է հայոց լեզվի և հատկապես մեր աշխարհիկ բանաստեղծության մեջ լայնորեն զտագործված կենդանի խոսակցական լեզվի ճկունությամբ, ձևարանական բազմազանությամբ, արամարանական շեշտը ռիթմականով փոխարինելու հնարավորությամբ և տոնիկական շեշտի շարժունությամբ:

Բր «Հայոց լեզվի տաղաչափությունը» շատ արժեքավոր գրքով Արեղյանը վերացրեց այն խոշոր բացը, որ երկար ժամանակ գոյություն ուներ հայ գրականագիտության մեջ, տեսական և գործնական մեծ օգնություն ցույց տալով մեր գրականագետներին ու բանաստեղծներին:

3

Ժողովրդական բանահյուսության և լեզվի հետ միասին Մանուկ Արեղյանը իր գիտական գործունեության ընթացքում սխտեմատիկ կերպով զբաղվել է հայոց հին և միջնադարյան գրականության ուսումնասիրությամբ, տպագրել է բազմաթիվ հոդվածներ ու գրքեր այդ գրա-կանության կարևոր հեղինակների ու հարցերի վերաբերյալ: Բր հոդվածներով ու գրքերով նա լույս է սփռել հայոց հին և միջնադարյան գրականության մի շարք չլուսաբանված կամ սխալ մեկնաբանված խնդիրների վրա, լուծել է բանասիրական կնճռոտ հարցեր, մեծապես նպաս-տել այդ գրականության լավագույն հուշարձանների արժեքավորման ու մասնաշաղկապման գործին:

1908—1912 թթ. «Արարատ» ամսագրի մի շարք համարներում տպագրվում է Արեղյանի ըն-դարձակ հոդվածաշարը «Երազականների մասին», ուր հեղինակը բազմակողմանի հետազոտու-թյան է ենթարկում շարականների ծագման ու զարգացման, նրանց բովանդակության ու ձևի հար-ցերը: Հիշված աշխատությունը ամենամրոզական ու լուրջ հետազոտություն է շարական-

¹ Ա. Ղարիբյան, Մ. Արեղյանի բերականագիտական ժառանգությունը (տե՛ս «Իրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Սրբան, 1916, էջ 149, 155, 158—159):

յների մասին և իբրև այդպիսին լրացնում է Հայոց հին գրականության պատմության կարևոր բացերից մեկը:

1913 թ. լույս է տեսնում Արեղյանի տեքստաբանական կարևորագույն աշխատություններից մեկը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական հրատարակությունը՝ պատրաստված Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ, 34 ձեռագրերի համեմատական ուսումնասիրության հիման վրա, ընդարձակ առաջաբանով և գիտական կարևոր ծանոթագրություններով: Արեղյանի այս գործը հայ պատմագիրների մեր ունեցած գիտական օրինակելի հրատարակություններից մեկն է՝ արդյունք տարիների համառու տրնաշան աշխատանքի:

Նույն տիպի մի գործ է նաև Մատենադարանի մի շարք ձեռագրերի հիման վրա Արեղյանի պատրաստած՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի գիտական հրատարակությունը, քննարկի հմտալից աշխարհարար թարգմանության հետ միասին, ընդարձակ առաջաբանով և հարուստ ու կարևոր ծանոթություններով (լույս է տեսել 1941 թ.):

1916 թ. «Ազգագրական հանդեսի» 26-րդ գրքում տպագրվում է Արեղյանի ընդարձակ հետազոտությունը՝ նվիրված X դարի հայ խոշորագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու կյանքին և գրական ստեղծագործությանը: Աշխատությունը կրում է «Գրիգոր Նարեկացի» վերնագիրը և ընդգրկում է հեղինակի հասարակական-գաղափարական միջավայրը, նրա մանրամասն կենսագրությունը, Ողբերգության մատյանի և Տաղերի բովանդակության, լեզվի ու արվեստի հանգամանալից վերլուծությունը, Նարեկացու ստեղծագործությունը դիտելով իբրև արտահայտություն հեղինակի ապրած դարաշրջանի կյանքի ու կրոնական աշխարհայեցողության, Արեղյանը միաժամանակ մեծ վարպետությամբ ցույց է տալիս նրա Տաղերում զգացվող կյանքի ու աշխարհայեցողության փոփոխության առաջին նշանները, իր բառերով ասած՝ «վերածնության առաջին շունչը»:

«Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրությունը հայ հին հեղինակների մասին Արեղյանի գրած լավագույն մենագրություններից մեկն է:

Հայոց հին ու միջնադարյան գրականությանը նվիրված Արեղյանի կարևոր աշխատանքներից է նրա «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» վերնագրով գործը, լույս տեսած 1923 թ. (ապրիլ-մայիս), որտեղ հեղինակը առաջին անգամ սեղմ ու ամփոփ ձևով տվել է Հայոց հին գրականության զարգացման հիմնական փուլերի գիտական բնութագիրը և գծել է այդ փուլերի մեջ մտնող հեղինակների հասարակական-գեղարվեստական գիմաստվածները:

1935 թ. Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի «Աշխատությունների» առաջին հատորում տպագրվում է Արեղյանի նոր հետազոտությունը՝ «Հայոց միջնադարյան առակներ և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» խորագրով, ուր հեղինակը հայոց միջնադարյան առակների նյութի հիման վրա բացահայտում է պատմական Հայաստանի այն ժամանակվա հասարակական կյանքի պատկերը, բազմաթիվ բնորոշ օրինակներով ցույց է տալիս «ազնվականության և աշխատավոր ռաժիկ դասի հարաբերությունը և երկրորդի պայքարը առաջինի դեմ, աշխատավորության կռիվը հոգևորականության դեմ» և այլն:

Իբր տեսակի մեջ խիստ ինքնատիպ այս հետազոտությունը սովետական շրջանում առաջին աշխատանքն էր, որ հատկապես նվիրված էր Հայոց հին գրականության մեջ տեղ գտած սոցիալական խնդիրների և դասակարգային պայքարի արձագանքների ուսումնասիրության գործին:

Առանձնապես արժեքավոր են Արեղյանի երկու աշխատանքները նվիրված հայկական վերածնության հարցերին: Դրանցից առաջինը «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» վերնագրով լույս է տեսել 1941 թ. (ՍՍՍՐ Գիտ. ակադ. հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, № 5—6, էջ 85—106), երկրորդը կրում է «Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը X դարի վերջում և XI դարի սկզբներում իբրև հիմք հայոց գրականության վերածնության շրջանի» վերնագիրը և լույս է տեսել 1943 թ. (նույն «Տեղեկագիր», № 1, էջ 39—52):

Նշված աշխատանքների մեջ Արեղյանը ջանացել է զարգացնել, ընդլայնել, խորացնել ու փաստական հարուստ նյութով բազմակողմանիորեն հիմնավորել 1917, 1923 թթ. և ավելի առաջ հայկական վերածնության մասին իր արժարժած տեսությունը: Ըստ Արեղյանի հայկական վերածնությունը «արգասիք է ներքին ուժերի վրա հիմնված անընդհատ զարգացման»: Այն սկզբնավորվում է քաղաքների, քաղաքային կյանքի ու քաղաքացիության աճման հետևանքով և ծայր առնելով XI դարի սկզբին՝ շարունակվում է մինչև XVIII դարի սկիզբը, երբ մեզաճում է ձգտում է առաջանում դեպի աշխարհիկ կյանքն ու բնությունը, մեղծվում է կղերա-միս-

տիկական գաղափարախոսությունը և առաջ են դալիս գրական նոր թեմաներ և նոր ժանրեր՝ ժողովրդական-խոսակցական լեզվով:

Արևելյանը ոչ միայն առաջինը առաջագրեց հայկական վերածնության պրոբլեմը, այլև առաջինը հայտնագործեց ու վերլուծեց այդ վերածնության սոցիալ-տնտեսական հիմքերը, նրա գրական գրականություններն ու առանձնահատկությունները մեր գրականագիտության մեջ:

Ինքնատիպ ու շատ արժեքավոր գործ է Արևելյանի հետազոտությունը հուշակավոր «Բան իմաստութեան»-ի հեղինակ Հովհաննես Սարկավազի մասին, որը նա համարում է հայկական վերածնության առաջին արտահայտություններից մեկը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1944, № 1—2, էջ 51—60): Չնայած այն բանին, որ Սարկավազի հիշյալ երկը վաղուց տպագրված էր ու հայտնի, բայց ոչ որ չէր հասկացել ու արժեքավորել այն: Արևելյանը առաջինը կարողացավ բացել այդ քերթվածը՝ ոսկյա կեղևը և ցույց տալ, որ այնտեղ թաքնված է արվեստի մի ամբողջ տեսություն, որի զեղարվեստական մարմնավորումը տվել է ինքը՝ Սարկավազը իր նույն այդ երկով: Խոսելով Սարկավազի «Բան իմաստութեան» բերթվածի հասարակական և գեղարվեստական մեծ արժեքի մասին, Արևելյանը գտնում է, որ դա «իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ: ...Մինչդեռ բոլոր հին կրոնական հայացքի՝ արվեստի աղբյուրը «հայտնությունն» է, Սարկավազը բանաստեղծությունը համարում է բնության նմանություն և ներբողում է բնությունը: «Այսուհանդերձ, — շարունակում է Արևելյանը, — նրա այս քերթվածի ամբողջության գեղեցկություններից մեկն այն է, որ բովանդակության առաջխաղացումը լինում է կրոնական առաջի վրա, որը, սակայն, երկրորդական տեղն է բռնում: Մի կողմից՝ իր դարից տարբեր և անկախ մտածողն է հանդիսանում, մյուս կողմից ամեն ինչ պարուրված է կրոնական պարուտակով, որ բնական է այն ժամանակի համար: Փոխտիպա մտածողը գրտնջվում է իր ժամանակաշրջանի մեջ և ոչ նրանից դուրս, և այս տալիս է նրա երկին իրակա-նության դբոշմը, որով և ավելի գրավիչ է դառնում այն»:

Արևելյանի՝ Հովհաննես Սարկավազին նվիրված այս հետազոտությունը մեծ գիտնականի ևսկնտիկայի հարցերի հմտության, գրականության յուրահատկության խորը բմբռնման և զեպի իր ուսումնասիրության առարկան ցուցաբերած պատմական մոտեցման փայլուն օրինակներից մեկն է:

Բացի վերոհիշյալ գործերից, մանուկ Արևելյանը մինչև իր «Հայոց հին գրականության պատմության» հատորները, գրել է նաև մի շարք ուրիշ աշխատանքներ՝ նվիրված հին և միջնադարյան գրականության հարցերին: Իրանցից են՝ «Էնդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» (1917), «Եահամայի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» (1934), «Մեսրոպ Մաշտոցի և հայ գրի ու գրականության սկիզբը» (1941) և այլն:

Այսպիսով, Արևելյանը շուրջ 50 տարվա բնթացքում առաջ է քաշել, հետազոտել ու մշակել է հայոց հին գրականության տարբեր շրջաններին վերաբերող բազմաթիվ կարևոր հարցեր, անձամբ գրել ու լուծել է այդ գրականության շատ ու շատ էական խնդիրները:

Իր «Հայոց հին գրականության պատմության» երկու մեծ հատորների մեջ, որոնցից առաջինը լույս է տեսել 1944 թ., իսկ երկրորդը 1946 թ., Արևելյանը հանրագումարի բերեց տարիների բնթացքում իր կատարած հետազոտությունների արդյունքները, մեծապես լրացրեց ու բնդաբձակեց դրանք նոր գրված թեմաներով ու գլուխներով, օգտագործելով նաև այդ ուղղությամբ հայ բանասերների կատարած լավագույն հետազոտությունների արդյունքները:

Քննության առարկա հաստորները ներկայացնում են հայոց հին և միջնադարյան գրականության առաջին ամբողջական ու բնդարձակ գիտական պատմությունը: Այդ մասին անցյալում գրված գրքերը եղել են կամ գուտ փաստադրական ոչ լրիվ շարադրանքներ և կամ համառոտ գասագիրը ձեռնարկներ միջնակարգ դպրոցների աշակերտության համար: Արևելյանը առաջին անգամ մեր գրականության մեջ մանրամասն, բազմակողմանի ու խորը կերպով վերլուծեց ու գնահատեց հայոց հին և միջնադարյան գրականության կարևորագույն հուշարձանների հասարակական-գաղափարական բովանդակությունը, նրանց չեզոճն ու զեղարվեստական առանձնահատկությունները: Նրա ուսումնասիրության նյութ են դարձել առաջին հերթին բուն գեղարվեստական ստեղծագործությունները, ապա այն գործերը, որոնք այս կամ այն չափով առնչված են գեղարվեստական գրականությանը, վերջապես գրավոր կուլտուրայի այն ոչ գեղարվեստական, «մարուր պրոզայիկ» գրվածքները, որոնք կարևոր դեր են խաղացել ժողովրդի բնդհանուր կուլտուրական դարգացման մեջ: Արևելյանը փորձել է տալ հայոց հին և միջնադարյան գրականության գիտական պարբերացումը, ելնելով ոչ թե ինչ-որ ձևա-

կան սկզբունքներից, ինչպես այդ արել են նրա նախորդներն ու ժամանակակիցները, այլ «բոլոր բովանդակության, նայելով դրականության մեջ արտահայտված պատմական իրականության»։ Արևելյանը հայոց հին դրականության բուն էությունը, նրա ոգին և ընդհանուր ուղղությունը համարել է օտարերկրյա բռնապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական դարավոր ու անդուլ մարտումները և բաղադրական պայքարը։

4

Մանուկ Արևելյանը այն գիտնականներից չէր, որոնք մնում են անշարժ կանգնած միևնույն կետի վրա, բարացած հայացքներով, լինելով զարմանալի հետևողական իր կարծիքներին ու տեսակետների մեջ, նա միաժամանակ իբրև առողջ մտքի ու առաջավոր հայացքների տնային գիտնական, տարիների ընթացքում ուշի-ուշով հետևել է գիտության նվաճումներին և բոլոր այսօրվա վերանայել, լրացրել ու մշակել է իր հետազոտությունները, ձգտել է վերացնել նրանց մեջ եղած թերությունները։

Այս տեսակետից բնորոշ են, օրինակ, Արևելյանի գրածները հայկական առասպելների մասին մեկ՝ 1899 թ. նրա «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» հայտնի գրքում և մեկ էլ՝ 1944 թ. նրա «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում։ Իր նոր աշխատության մեջ, գրականության պատմության պահանջների համեմատ համառոտելով ու փոփոխելով իր հին գործի բանասիրական, բանավեճային մասերը, գիտնականը միաժամանակ տվել է նոր ու կարևոր մեկնաբանություններ ու բնութագրումներ։ Հիմնվելով հունական դիցաբանությանը Կ. Մարքսի աված հայտնի բնութագրման վրա, Արևելյանը ճիշտ բացատրություն է տվել հայկական առասպելներին, համարելով դրանք «հանգույն բանաստեղծության մի տեսակը», «որոնց մեջ, բոլոր նախնական աշխարհայեցողության ու հավատալիքների, գրեթե բոլորն ու հասարակական ձևերը... անգիտակցորեն մշակված են ժողովրդի երեակայությանը», և որոնց մեջ՝ «ոգիների, դիցազների կամ աստվածների պատկերով՝ ձևավորված ու դրոշմված են նախնական ժողովրդների հայացքը մի կողմից՝ հասարակական հարաբերությունների, մյուս կողմից՝ բնության ուժերի և երևույթների վրա»։ Նա հանգամանորեն վերլուծման է ենթարկել հայոց առասպելների հիմքը հանդիսացող նախնական աշխարհայեցողությունն ու հավատալիքները, մեծ վարպետությամբ բացահայտել է Հայկի, Վահագնի, Արայի, Տիգրանի, Արտաշեսի մասին ստեղծված առասպելների ու վեպերի արվեստն ու գաղափարական կերպարները, խնդիրներ, որոնց նա չի անդրադարձել կամ էլ շատ քիչ է ուշադրություն դարձրել իր նախորդ ուսումնասիրության մեջ։

Արևելյանի գիտական հայացքների մեջ տարիների ընթացքում կատարված տեղաշարժի և այս հիման վրա նրա գործերում տեղ գտած նոր մեկնաբանությունների տեսակետից հատկանշական են նաև նրա գրածները «Սասունցի Դավիթ» վեպի մասին։ Այսպես, 1889—1890 թվականներին գրած իր «Աղգային վեպ» ուսումնասիրությունը, որի մեջ գլխավոր տեղը գրավում էր վեպի դիցաբանական կողմի վերլուծումը, Արևելյանը հիմնովին վերամշակում և ընդլայնում է 1908 թ. իր «Հայ ժողովրդական վեպը» հետազոտության մեջ, հանգամանորեն կանգ առնելով «Սասունցի Դավիթ» պատմական, աշխարհագրական, կենցաղային մոտիվների և այլ հարցերի վրա։ Նույն թվականի բնագավառում նա հետաքրքիր, նոր ու կարևոր լրացումներ է կատարել նաև 1939 թ. գրած իր «Մատենագիտություն Սասունցի Դավիթ հայ ժողովրդական վեպի մասին» աշխատության մեջ։ Առանձնապես ուշադրավ են այստեղ գիտնականի մտքերը «Սասունցի Դավիթ» էպոսի դարերի ընթացքում կրած ազդեցությունների ու փոփոխությունների, նրա վարիանտների նշանակության, ինչպես նաև նրա «էական թեմայի» մասին։ Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ. «Մեր Սասունցի Դավիթ կամ Սասնա տուն մեծ վեպը մի շատ հետաքրքիր երևույթ է իր ապրած դարավոր կյանքով և դարերի ընթացքում իր կրած պատմական ազդեցություններով և դրանց հետևանքով՝ այս կամ այն փոփոխություններով։ Հենց դրանց, այդ փոփոխությունների մեջ է մեր վեպի գլխավոր արժանիքներից մեկը։ Մեր վեպի բազմաթիվ վարիանտները շատ կարևոր են ընդհանրապես ժողովրդական վեպի-էպոսի պատկերավորական ուսումնասիրության տեսակետից։ Վեպի այս դարավոր շարժումը մի հազվագեղ երևույթ է ավանդական վիպական բանահյուսությունների պատմության համար։ Այդ շարժման մեջ սլարգ երևան

¹ Մ. Արևելյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ 19։

են գալիս մեր վեպի ներքին հակասական ձգտումներն ու կողմերը, այդ կողմերի անցումը մեկից մյուսին...»² Եվ ապա. «Մեր վեպի մեջ, հենց իր այս դարավոր կյանքի շնորհիվ, արտացոլվում է կարելի է ասել, մեր պատմության էական կողմը՝ սկսած ամենահին դարերից: Մեր երկիրը հաճախ, շատ հաճախ ենթակա է եղել հարձակումների. այդ տեսում ենք նաև մեր վեպերի մեջ: Բայց տեսնում ենք նաև մեր ժողովրդի անընկճելի ձգտումն ու կամքը՝ պաշտպանվելու դրսից հարձակվող թշնամու դեմ և ոչնչացնելու նրան, հակահարված տալու իր հայրենի երկրի կեղերիցներին և պահպանելու իր անկախությունն ու ազատությունը: Մեր բոլոր լավագույն վեպերի էական թեման այդ է սկզբից ի վեր»¹:

1939 թ. գրված այս տողերի մեջ տրված է «Սասունցի Դավիթ» բազմադարյան կյանքի շրինջափոխությունների, ինչպես նաև նրա բազմաթիվ կյանք-գաղափարական էություն սեղմ ու սպասելի բնութագիրը:

Նույն շարժումն ու զարգացումը դեպի առաջ և դեպի խորքը մենք տեսնում ենք նաև Արեղյանի լեզվարանական-բերականագիտական և գրականագիտական գործերի մեջ:

Մանուկ Արեղյանի աշխատությունները նվիրված հայ ժողովրդական բանահյուսության, հայոց լեզվի ու գրականության հարցերին, անկախ նրանց մեջ եղած որոշ վիճելի կետերից ու առարկելի դրույթներից, կարևոր ներդրումներ են հայագիտության ասպարեզում: Այդ աշխատությունների մեջ դրսևորված է մեծ գիտնականի հետազոտական խորը միտքը, հուժկու տրամաբանությունը, բազմակողմանի ուղղատեսությունը, ուղղամտությունն ու ուղղադատությունը: Այդ աշխատությունների մեջ արտահայտված է Արեղյանի բացառիկ ուշադրությունը դեպի փաստերը, օբյեկտիվ իրականության տվյալները, նրա կողմից պատմականության սկզբունքի հետևողական կիրառումը, քննադատական մոտեցումը դեպի աղբյուրները, սկզբունքայինությունն ու հետևողականությունը: Այդ աշխատությունների մեջ ցոլանում է մեծ հայագետի բուռն սերն ու անկաշառ նվիրվածությունը իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին:

Մանուկ Արեղյանը անգնահատելի դեր է կատարել հայ ժողովրդի բազմադարյան, հարուստ ու հին կուլտուրայի ուսումնասիրության ու մասսայականացման գործում: Նրա բազմահատոր գրքերը երկար ժամանակ հանդիսացել են և դեռ կհանդիսանան այն հիմնական աղբյուրները, որտեղից առատ գիտելիքներ ու փաստեր են բաղել և պիտի բաղեն շատ շատերը:

ВЫДАЮЩИЙСЯ АРМЕНОВЕД

А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Научное наследие Манука Абеяна охватывает три важные области арменоведения: народное творчество, язык и литературу. Прделанная им работа во всех этих областях велика и объемиста.

Глубокосодержательные и капитальные научно-филологические труды М. Абеяна, как, например, «Армянский народный эпос», «Армянские народные мифы в Истории Армении Мовсеса Хоренаци», «Древние гусанские-народные песни», являются результатом его долголетней упорной исследовательской работы.

Велика роль М. Абеяна в области изучения древнего и нового армянского народа. Особенно ценными являются его труды «Синтаксис ашхарабара» (новоармянского языка) и «Теория армянского языка».

Долгие годы М. Абеян занимался изучением древней и средневековой армянской литературы, проявив при этом большой талант филолога-литературоведа и историка литературы. Обобщением и синтезом этих работ является его двухтомный труд «История древнеармянской литературы», где впервые сделана попытка дать научную периодизацию древней и средневековой армянской литературы, раскрыть ее подлинную сущность и основное направление.

Труды М. Абеяна, посвященные армянскому фольклору, проблемам армянского языка и литературы, несмотря на некоторые спорные положения, являются ценным вкладом в арменоведение.

² «Սասունցի Դավիթ» թիրիոդրաֆիայի առաջաբանից, Երևան, 1939, էջ 70—71: